



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ  
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

«Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք

09 դեկտեմբերի 2022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17  
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 18 անդամներ:

Բացակա էին՝ Կարեն Մանասերյանը, Եղիշե Նազարյանը, Մարատ Շահբազյանը:

**Ավագանու նիստին մասնակցում էին՝**

Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Հայկանուշ Ավագյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը**

Լսեցին.

**ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի  
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ **ավագանին որոշեց.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 149-Ա/

Լսեցին.

**ԵՂԵԳՆԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնածոր համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 4-ի թիվ 23-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.

1) Պակասեցնել գործառնական դասակարգման՝

ա) 06.4.1 ոլորտի, տնտեսագիտական դասակարգման 4212 (Էներգետիկ ծառայություններ) հոդվածից 10 635 000 (տաս միլիոն վեց հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ,

բ) 01.6.1 ոլորտի, տնտեսագիտական դասակարգման 4823 (պարտադիր վճարներ) հոդվածից 1 083 479 (մեկ միլիոն ութսուներեք հազար չորս հարյուր յոթանասունհինը) ՀՀ դրամ:

2) Ավելացնել գործառնական դասակարգման՝

01.3.3 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) 4819 (նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) հոդվածին 11 718 479 (տասնմեկ միլիոն յոթ հարյուր տասնութ հազար չորս հարյուր յոթանասունհինը) ՀՀ դրամ, Նոր ավան թաղամասի կոյուղու կառուցման աշխատանքների իրականացման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 150-Ն/

Նիստին ներկա ավագանու անդամներ

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ԱՍՏԴԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

